# 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## *1.1. Ազգային հաշիվներ*

### *1.1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ*

***2009թ. հունվար-փետրվարի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը:*** ՀՆԱ-ի արտադրության ծավալն ընթացիկ գներով, 2009թ. հունվար-փետրվարին կազմել է 282159.7 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2008թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 96.3%, 2008թ. հունվար-փետրվարի 110.1% համապատասխան ցուցանիշի դիմաց:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2009թ. հունվար-փետրվարին կազմել է 87121 դրամ (285 ԱՄՆ դոլար կամ 220 եվրո):

ՀՆԱ՝ հաշվարկված արտադրական եղանակով
(ըստ ԵՀՀ 95[1] Ա 3 և Ա 6 դասակարգումների)

*(%)*

| Հղում ՏԳՏԴ-ին | | | Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ | | ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետով) | | ՀՆԱ-ի կառուցվածքը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հունվար-փետրվար | | | | | |
| Ա 3 | Ա 6 | | 2008 | 2009 | 2008 | 2009 | 2008✧ | 2009 |
| | | **Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով)** | 110.1 | 96.3 | 10.1 | -3.7 | 100.0 | 100.0 |
| | | Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) | 124.1 | 83.9 | 5.1 | -2.9 | 18.2 | 15.8 |
| | | Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) | 106.3 | 99.1 | 5.0 | -0.8 | 81.8 | 84.2 |
| | | ՖՄԱՉԾ[2] | 106.7 | 97.3 | -0.1 | 0.1 | -3.2 | -3.7 |
| A+ B | A+ B | Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն | 100.2 | 100.1 | 0.0 | 0.0 | 8.2 | 7.9 |
| C+ D+ E+ F | | Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկա և շինարարություն | 106.0 | 92.9 | 1.9 | -2.2 | 30.0 | 27.3 |
| | C+ D+ E | Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան | 103.3 | 90.4 | 0.8 | -2.3 | 23.5 | 18.9 |
| | F | Շինարարություն | 115.3 | 101.6 | 1.1 | 0.1 | 6.5 | 8.4 |
| G- P | | Գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում | 107.9 | 102.7 | 3.2 | 1.3 | 46.8 | 52.7 |
| | G+ H+ I | Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ, տրանսպորտ և կապ | 108.8 | 100.4 | 2.0 | 0.1 | 25.2 | 26.1 |
| | J+ K | Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում | 109.6 | 106.4 | 0.5 | 0.7 | 10.9 | 13.5 |
| | L+M +N+ O+P | Այլ գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում | 105.6 | 104.4 | 0.7 | 0.5 | 10.7 | 13.1 |

---

[1] Եվրոպական հաշիվների համակարգ:
[2] Ֆինանսական միջնորդության անուղղակի չափվող ծառայություններ: